

Վստահված անձինք, դիտորդները և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները կարևոր դեր են կատարում ընտրական գործընթացի ընթացքում՝ ապահովելով ընտրական գործընթացի թափանցիկությունը, հասարակական վերահսկողությունը, դիտարկումը և լուսաբանումը:

ՎՍՏԱՅՎԱԾ ԱՆՁԻՆՔ ԸՆՏՐՎԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Վստահված անձինք իրենց թեկնածուների (կուսակցությունների) գրանցումից հետո նրանց շահերն են ներկայացնում ընտրական հանձնաժողովների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների հետ փոխհարաբերություններում:

Վստահված անձ կարող են լինել միայն ՀՀ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները:

Թեկնածուները գրանցվելուց կամ կուսակցությունները կամ կուսակցությունների դաշինքները՝ իրենց ընտրական ցուցակները գրանցելուց հետո կարող են ունենալ վստահված անձինք:

Վստահված անձանց գրանցումը.

Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրությունների ժամանակ, որպես թեկնածու գրանցված կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքների վստահված անձանց գրանցում և համապատասխան վկայականներ է տալիս **կենտրոնական ընտրական հանձնաժողովը**, իսկ մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների վստահված անձանց՝ **ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:**

Թեկնածուն (կուսակցությունը, դաշինքը) լիազոր ներկայացուցչի միջոցով (թեկնածուն՝ նաև անձամբ), համապատասխան ընտրական հանձնաժողով է ներկայացնում հայտ՝ կցելով այն քաղաքացիների ցուցակը, որոնց առաջարկում է գրանցել որպես վստահված անձ:

Ցուցակում ընդգրկված քաղաքացիների թիվը չի կարող գերազանցել տվյալ ընտրության ընտրական տեղամասերի թվի եռապատիկը:

Թեկնածուն (կուսակցությունը, դաշինքը) ներկայացված ցուցակներին համապատասխան, լրացնում են վկայականները և տրամադրում վստահված անձանց: Վստահված անձը համարվում է գրանցված՝

ընտրական հանձնաժողովի կողմից վկայականը վավերացնելու պահից:

Վստահված անձ չեն կարող լինել սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, ՀՀ ոստիկանության և ՀՀ ազգային անվտանգության ծառայության, պաշտպանության նախարարության, դատախազության, հարկային և մաքսային մարմինների աշխատակիցները, սոցիալական ապահովության մարմինների (ծառայությունների) աշխատակիցները, զինծառայողները, հոգևորականները, ընտրական հանձնաժողովի անդամները, պետական զանգվածային լրատվության միջոցների ղեկավարները և օտարերկրյա քաղաքացիները:

ՎՍՏԱՅՎԱԾ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Վստահված անձը իրավունք ունի՝

- 1) խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու հանձնաժողովի նիստերին, քվեարկության ընթացքում և քվեարկության արդյունքները ամփոփելիս ներկա գտնվելու քվեարկության սենյակում (յուրաքանչյուր թեկնածուի և կուսակցության մեկական վստահված անձ),
- 2) ծանոթանալու ընտրական փաստաթղթերին, ընտրական հանձնաժողովների որոշումներին, արձանագրություններին, ստանալու դրանց պատճենները, կատարելու քաղվածքներ, ծանոթանալու քվեարկած քվեաթերթիկներին,
- 3) բողոքարկելու հանձնաժողովների որոշումները, գործողությունները, անգործությունը,
- 4) ԿԸՀ-ի կողմից սահմանված կարգով (22.06.2005թ-ի թիվ 14-Ն որոշում) հետևելու քվեաթերթիկների տպագրման, փոխադրման, պահպանման և քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին,
- 5) քվեարկության օրը հետևել ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և դրանց վերաբերյալ հանձնաժողովի նախագահին ներկայացնել դիտողություններ և առաջարկություններ, որոնց կապակցությամբ վերջինս ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ:

Վստահված անձի իրավունքների որևէ ՍԱՀՄԱՆԱՓՎԱՌԻՄ չի թույլատրվում: Ոչ ոք, այդ թվում՝ ընտրական հանձնաժողովները, իրավունք չունեն վստահված անձանց դուրս հանելու քվեարկության սենյակից կամ ցանկացած այլ կերպ նրանց մե-

կուսացնելու հանձնաժողովի աշխատանքներին ներկա գտնվելուց, բացառությամբ՝ նրանց ձերբակալելու կամ կալանավորելու դեպքերի:

Վստահված անձը չի կարող պատասխանատվության ենթարկվել ընտրությունների ընթացքի և արդյունքների ամփոփման վերաբերյալ իր հայտնած կարծիքի համար:

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն՝

- 1) միջազգային կազմակերպությունները,
- 2) օտարերկրյա պետությունների ներկայացուցիչները,
- 3) ՀՀ և օտարերկրյա հասարակական այն կազմակերպությունները, որոնց կանոնադրական խնդիրները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, և որոնք չեն աջակցում թեկնածուներին կամ կուսակցություններին:

Վերոնշյալ կազմակերպությունները դիտորդական առաքելություն կարող են իրականացնել ԿԸՀ-ում հավաստարմագրվելուց հետո:

ԴԻՏՈՐԴԻ, ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Դիտորդը, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչը իրավունք ունեն՝

- 1) ներկա գտնվել ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև տեղամասային կենտրոնում: ԿԸՀ-ի սահմանած կարգով հետևել քվեաթերթիկների տպագրման, փոխադրման, պահպանման և քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին,
- 2) անարգել ծանոթանալ տվյալ ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին, քվեաթերթիկների մուշտեղներին, ընտրական հանձնաժողովի որոշումներին, նիստերի արձանագրություններին, ստանալ դրանց պատճենները, կատարել քաղվածքներ,
- 3) ԿԸՀ-ի սահմանած կարգով ազատ տեղաշարժվել տեղամասային կենտրոնում՝ քվեաթերթիկների ու քվեատուփի դիտարկման համար:

Դիտորդը քվեարկության օրը հետևում է ընտրական հանձնաժողովի աշխատանքներին: Դրանց վերաբերյալ հանձնաժողովի նախագահին կարող է ներկայացնել դիտողություններ և առաջարկություններ, որոնց կապակցությամբ վերջինս ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ:

Դիտորդը կարող է հանդիպումներ ունենալ թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և ընտրողների հետ, ՀՀ օրենսդրությանը համապատասխան անցկացնել մամլո ասուլիսներ, դիմել զանգվածային լրատվության միջոցներին:

Ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև տեղամասային կենտրոնում, կարող են ներկա գտնվել յուրաքանչյուր միջազգային կազմակերպությունից մինչև երկու դիտորդ՝ թարգմանչի ուղեկցությամբ, իսկ տեղական դիտորդների դեպքում՝ յուրաքանչյուր կուսակցությունից կամ հասարակական կազմակերպությունից՝ մեկ դիտորդ:

Դիտորդի և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցչի **իրավունքների որևէ ՍԱՀՄԱՆԱՓՎԱԿՈՒՄ չի թույլատրվում** ընտրական բոլոր գործընթացներում:

Դիտորդը և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչը չեն կարող պատասխանատվության ենթարկվել ընտրությունների ընթացքի և արդյունքների ամփոփման վերաբերյալ իրենց հայտնած կարծիքի համար:

Դիտորդը, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչը իրավունք չունի միջամտել ընտրական հանձնաժողովի աշխատանքներին:

Դիտորդական առաքելություն իրականացնելու հետ կապված հարցերը կարգավորվում են ՀՀ ընտրական օրենսգրքի (ընդունված 05.02.1999թ.) 6-րդ գլխով և ՀՀ Կենտրոնական Ընտրական հանձնաժողովի «Դիտորդական առաքելություն իրականացնելու կարգը սահմանելու և դիտորդների վկայականների ձևերը սահմանելու մասին» 19.07.2005թ-ի որոշմամբ:

Ընտրությունների վերաբերյալ ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) որոշումների մասին տեղեկատվություն կարելի է ստանալ ԿԸՀ-ի պաշտոնական վեբ կայքում՝ www.elections.am:

ԿԸՀ-ի հասցեն է՝ Գևորգ Քոչարի փողոց, 21ա, հեռ.՝ (374 10) 543523, էլ. փոստ՝ cec@intergalaxy.am:

Լրացուցիչ տեղեկություններ, ինչպես նաև ընտրությունների հարցերով անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար, (նաև 2007թ.-ի մայիսի 12-ին), կարող եք դիմել **Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիային** հետևյալ հասցեներով՝

- ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2, հեռ.՝ (374 10) 540199, ֆաքս՝ (374 10) 580299, էլ. փոստ՝ ayla@ayla.am,
 - ք. Գյումրի, Տիգրան Մեծի պողոտա 1, բն. 2, հեռ.՝ (374 312) 23812, ֆաքս՝ (374 312) 38236 էլ. փոստ՝ gyumri@ayla.am,
 - ք. Կապան, Ա. Մանուկյան 1, բն. 72, հեռ./ֆաքս՝ (374 285) 62511, էլ. փոստ՝ kapan@ayla.am,
 - ք. Վանաձոր, Վարդանանց 82, բն. 1, հեռ./ֆաքս՝ (374 322) 22317, էլ. փոստ՝ vanadzor@ayla.am,
 - ք. Իջևան, Սահմանադրության հրապարակ 1, Մարզպետարանի շենք, հեռ./ֆաքս՝ (374 263) 32499, էլ. փոստ՝ ijevan@ayla.am,
 - ք. Գավառ, Մարզպետարանի շենք, հեռ./ֆաքս՝ (374 264) 25503, էլ. փոստ՝ gavar@ayla.am,
 - ք. Գորիս, Մաշտոցի 3, հեռ./ֆաքս՝ (374 284) 25861, էլ. փոստ՝ goris@ayla.am:
- Կարող եք այցելել նաև ՀԵԻՎ վեբ կայք՝ www.ayla.am:

Սույն տեղեկատվական թերթիկը պատրաստվել և հրատարակվել է Վրաստանում և Հայաստանում Նիդեռլանդների Թագավորության դեսպանատան Մատրա ԿԱՊ փոքր դրամաշնորհների ծրագրի կողմից տրամադրված միջոցների հաշվին, Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կողմից իրականացվող «Ընտրական իրավունքների իրազեկության և պաշտպանության քարտզարչավ» ծրագրի շրջանակներում:



ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ - 2007Թ.

ՎՍԱՀՎԱԾ ԱՆՁԻՆՔ, ԴԻՏՈՐԴՆԵՐԸ ԵՎ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Սույն տեղեկատվական թերթիկը տեղեկություններ է պարունակում վստահված անձանց, դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների՝ ընտրական գործընթացի մասնակցության, նրանց գրանցման և հավատարմագրման, նրանց իրավունքների և երաշխիքների մասին:

ԾՈՂՈՎԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ